

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Սահմանները: Լեռնային Ղարարաղի Ինքնավար Մարզը, որն այժմ մանում է Ադրբեջանական Հանրապետության կազմի մեջ, ընդգրկում է նախկին Ելիզավետպոլի նահանգի Զիվանշիրի, Շուշու և Կարյադինոյի դավառների լեռնային ու, աննշան չափով, ցածրագիր շրջանները: Մի ժամանակ, այդ սմբողջ երկրամասը մտնում էր Արցախի ավելի ընդարձակ հայ-աղվանական երկրամասի մեջ, Ռուսաստանի հեռ միավորվելուց (սկզբում՝ 1805 թ., իսկ վերջնականապես, Գյուլիստանի պայմանագրով՝ 1813 թ.) ոչ շատ առաջ այն արոհված էր չորս ավաաաաիրական իշխանությունների՝ Զրարերդի, Խաչենի, Վարանդայի և Դիղակի, որոնք «մեկիքություն» էին կոչվում, ու հարակից Գյուլիստանի մեկիքության և Չտնգեգուրի հեռ միասին XVIII դարում Մերձկուրյան իշվածքի մի մասի հեռ միավորված էին մեկ՝ Ղարարաղի խանության մեջ: Այսպիսով, այժմյան Լեռնային Ղարարաղը կազմում է նախկին Ղարարաղի խանության (որի սահմանները տարածվում էին հեռու՝ հյուսիսային, հարավային, մասամբ էլ արեւելյան ուղղությամբ) միայն մի մասը:

Լեռնային Ղարարաղն զբաղեցնում է Ղարարաղի տարածքի ամբողջ հյուսիսարեւելյան լանջը և Թարթառի (Տրտու) ճկահարթի (դեպրեսիա)¹ մի մասը, որոնք առաջացել են երկրաբանական երրորդական ժամանակաշրջանում երկրակեղևի ճեղքվածքների միջև, որոնք անցնում էին, մի կողմից, Ղարարաղի այժմյան լեռնաշղթայի գծով, մինչև Արաքս դեպի ճեղքվածքը, մյուս կողմից, այդ գծի երկու ծայրերով, նրան դրեթե ուղղահայաց և ուղղված դեպի Կուր դեպը: Լեռնային Ղարարաղի արեւմտյան սահմանը հանդիսացող բուն Ղարարաղի լեռնաշղթան ձևացնում է ծովի մակերեւծությունից 1800—2100 մ. բարձ. մակաշերտի եղբ, որի վրա պահպանվել են ավելի վաղ դոյացման ծալքեր, այդ լեռնաբեկորի հյուսիսարեւելյան ծայ-

րը իջնում է դեպի Կուր դեպը: Այդ լեռնաշղթայի սրածայր կաարը, որի վրա շարված են Ալաղալա (2597 մ), Ղղղալա (2845 մ), Աարի-Բարա (2311 մ), Աեծ Քիրս (2742 մ) և, վերջապես, Դիգափալա (2497 մ) դադաթները, Լեռնային Ղարարաղը բաժանում են Լալինի և Ղուրաթլիի շրջաններից:

Լեռնային Ղարաբաղն ընդգրկում է նաև Թարթառի ճկահարթի դերակշռող մասը՝ երկրակեղևի իջվածքների Գյանշայի (Գանձակ, այժմ՝ Կիրովաբաղ) և Ղարաբաղի բարձրացած լեռնային մասերի միջև: Այստեղ Լեռնային Ղարարաղի արեւմտյան սահմանը հատում է ճկահարթը, մինչև Մոավ լեռնադադաթը (3633 մ), որը դանվում է լեռնաբեկորի Գյանշայի հաավածի հարավային ճեղքվածքի ելուստ Մոավի հրաբխային լեռնաշղթայի վրա: Մոավ լեռան բարձրագույն կեար Գյամիշ գադաթն է (3740 մ):

Լեռնային Ղաբարաղի Ինքնավար Մարզի հյուսիսային սահմանն անցնում է Մոավ լեռան արեւելյան մասով, այնուհեան թեքվում հյուսիսարեւելք: Մարզը Ղարարաղի իջվածքից հաաում է խիստ աննշան մի շերտ, քանի որ նրա արեւելյան սահմանը մոա է նախալեռների սաորոտին, որոնցից այն իջվածքում կամ դրա ծայրամասերում հեռանում է 3—10 կմ, մի կողմ թողնելով Թարթառ, Աղղալ, Կարյադինո, Զերրայիլ և այլ ընակավայրերը: Հարավային սահմանն անցնում է անաաաղուրկ ու չոր դարավանդներից մեկով, որոնցով Ղարաբաղի լեռնաշղթան Դիղափալտից իջնում է դեպի Արաքս դեպը:

Ռելիեֆը: Լեռնային Ղարարաղի աարեր կեաներ ընկած են ծովի մակերեւծությունից 0—2000 մ բարձրությամբ, ընդ որում, ռելիեֆը բնութագրվում է ոչ այնքան ցածրություններով, որքան նախալեռներով ու լեռնային աեդամասերով, Երկրամասի բաժանումը շրջանների. հնում, ինչպես և ներկայում, որոշվել է հենց ղխավոր լեռնաշղթաների ուղղություններով: Այս աեսակեաից երկրամասը կարելի է բաժանել երկու մասի՝ դրեթե լրիվ Թարթառի ճկահարթում ընկած հյուսիսային կե-

¹ Տե՛ս Օր. Օավաղի կազմած երկրաբանաան բարաեղը նրա «К описанию тектонического развития Армянского нагорья» (ՔիՖիս. 1916, I) գրքում:

սում այդ շղթաներն ունեն կանոնավոր հյուսիս-արևելյան ուղղությամբ, իսկ հարավային մասում գերակշռում է հարավարևելյան ուղղությունը: Հյուսիսային կեսում Թարթառ գետի հովիտը հարավից գոտևորում է մի բավականին բարձր լեռնաբազուկ, որն սկսվում է Չիլգյա գագաթից և որը հայերն անվանում են Արծաթահանքի գագաթ: Այն ձգվում է Մոսկի լեռնաշղթային գրեթե շուրջ հեռու, և զրա գագաթները դարձանալի օրինալափությամբ ցածրանում են հյուսիս-արևմուտքից արևելք՝ հոջա-Ուրթը՝ 2302 մ, Հոթեգանը՝ 1759 մ, Անեգեթը՝ 1475 մ, Կուսապալը՝ 1374 մ: Լեռնագիծն ավարտվում է Թարթառ լեռից ոչ հեռու, 300 մ մոտ բարձրություններով:

Արծաթահանքի շղթայից քիչ ցած, նույն՝ հյուսիսարևելյան ուղղությամբ, տեսնում է Ղարաբաղի լեռնաշղթայի ճյուղավորություն կաղմող երկրորդ լեռնապարը: Այն բաժանվում է Ղաղալա գագաթից (նրա առանձին գագաթներ բարձր են՝ Գալաղալը՝ 1889 մ, Սաքսագանը՝ 1721 մ, Թեշդարասաբան՝ 1303 մ, Ճալի-գաղը՝ 905 մ, և ավարտվում է Բաղեշլու գագաթով (706 մ), Լեռնային Ղարաբաղի սահմանին մոտ Շահբուլաղի հորգաբուխ աղբյուրից վեր:

Շատ ավելի բարդ է Մեծ Քիրսի երրորդ ճյուղավորության համակարգը: Այն նույնպես, Չախմախի ճյուղավորություն անվամբ, անջառվում է Ղարաբաղի լեռնաշղթայից՝ Մեծ Քիրսից, և ձախ կողմում թողնելով Գարգառ գետի կիրճը, Փոքր Քիրս (2239 մ), Չախմախ (1567 մ), Բողուր-խանի ղանգված (1624 մ), հալի-հութ (1539 մ) գաղաթներով հասնում է Վարապաբուն (Արանդամին) գյուղը, Աղդամից վեր ավարտվելով Գուրջու-հութ (472 մ) գագաթով: Այս լեռնաճյուղից էլ հենց, հարավային կեսում, գնում են հարավարևելյան ուղղություն ունեցող ճյուղավորությունները: Դրանցից երեքը (որոնցից ամենահարավայինը կոչվում է հազագի) հովհարաձև բաժանվում են ղանգվածային հանգույց Բողուրխանից, ընդ որում, մեջտեղին իր հերթին արոհվում է երկու ճյուղի: Ղարաբաղի լեռնաշղթայի ծայր հարավային վերջավորությունից՝ Դիղափայտ գագաթից դեպի Արաքս է իջնում երեք ճյուղավորություն: Ինչպես Չախմախի, այնպես էլ Դիղափայտի ճյուղավորությունները աարածվում են Ղարաբաղի լեռնաբեկորի ընդարձակ սանգղավանգակով, գոյացնելով շատ թե քիչ լայն հովիտներ, որոնցով հոսում են Լեռնային Ղարաբաղի սահմաններից դուրս գտնվող տափաստաններն իջնող արագահոս գետակները:

Գետերը: Այնտեղ՝ Չախմախի լեռնաճյուղի վարազաբնի շարունակության և եռանգամ Բողուրխանի համակարգի հյուսիսային ճյուղավոր-

ման միջև, աղբյուրներով հարուստ այդ շրջանից սկիզբ է առնում և գեպի Աղդամի մերձակայքը հոսում շուրջ չորս գետակ: Բողուրխանի հյուսիսային և միջին ճյուղավորությունների միջև հոսում է Հոնաջեն գետը: Միջին լեռնապարի ճեղքվածքից գեպի Սուղանի տափաստանն է հոսում Ղաղալ գետը: Բողուրխանի համակարգի միջին և հարավային լեռնապարերի միջև գտնվող հովիտից այդ նույն տափաստանն է ելնում նաև Կորուս գետը, որը թափվում է հարավային Բողուրխան և Փոքր Քիրս ճյուղավորությունների միջև գտնվող հովիտից իր ցրերը հավաքող Կենգիլան գետը: Ավելի հարավ՝ Փոքր Քիրսի լեռնաճյուղի ու Դիղափայտի միջև, այդ բոլոր ցրերը միավորվում են Ղուրուսու («Ցամաք») գետում (Տողի հովիտ) և գուրս են գալիս գեպի Կարյագինու: Հագրութի հովտում, Դիղափայտի համակարգի հյուսիսային և հարավային ճյուղավորումների միջև, գոյանում է Կոզու («Ընկույզի») գետը, և, վերջապես, Արաքսի հովտում, միջին և հարավային ճյուղավորումների միջև՝ Զերրալի հոսող Մամձոր գետակը:

Չախմախի լեռնաճյուղից հարավ ընկած շրջաններից հոսող այս բոլոր գետակները լափերով, երկարությամբ և ջրառատությամբ զգալիորեն ղիջում են հյուսիսային կեսի գետերին՝ Գարգառին, հաշենին ու Թարթառին, որոնց հովիտները միաժամանակ հաղորդակցության կարեոր ուղիներ են Մերձկասպյան տափաստանների և Հայկական ՍԱՀ-ի միջև: Դա բացատրվում է ոչ միայն Թարթառի ճկտհարթի մթնոլորտային տեղումների առատությամբ, որը, ի միջի այլոց, Մոսկի լեռնաշղթայի կողմից Կասպից ծովի գոլորշիների շարժումը կասեցնելու արդյունք է, այլ նաև այն տարածությունների մեծ մակերեսով, որոնց հոսքն են այդ դետերը: Այդ գետերից ամենամեծը Թարթառն է: Միակը, որ հասնում է Կուր գետին, մյուսները՝ հաշենն ու Գարգառը, ցածրավայրի բնակիչների կողմից ջրանցքների են տրոհվում և, հարավային կեսի դետերի նման, չեն հասնում Կուր գետին: Միայն հաշենն է, որ որոշ տարիներ, երբ շառ վարար է լինում, իր լայն հունով հասնում է Կուրին: Ընդհանրապես, որքան Արաքսին ավելի մոտ, այնքան մթնոլորտային տեղումները քչանում են և ավելի շատ է զգացվում խոնավության ու հոսքային ջրերի պակասը, լեռների լանջերն այդ ուղղությամբ տվելի ու ավելի են մերկանում անառածածակությից²:

Անտառները: Վերջին հարյուրամյակի ընթացքում հարավային մասի անտառները խիստ նոսրացել են: Տեղ-տեղ գարավոր անտառներից

² Լեռնային Ղարաբաղում, ինչպես և Անդրկովկասի այլ

միայն հուշ է մնացել՝ առանձին ցցված ծառերի կամ մոշի ու դիհու թփուտների տեսքով:

Անտառածածկույթն այժմ լեռնաշխարհի ըստորոտից բարձրացել է վեր՝ դեպի Ղարաբաղի լեռնաշղթայի դադաթափն մասը: Այն դեռ. պահպանում է իր փառահեղ-կուսական ընդլայնման հայտնաբերման մասում, լեռնահովիտների և հալաների կիրճերի լանջերին, որտեղից տնտեսական, հասարակական ու քաղաքական ընդլայնմանը XVIII դարում տարածվեց Գարգառի հովիտը, իսկ ավելի կոնկրետ, Ղարաբաղի խանության հաստատումից հետո՝ Շուշի մայրաքաղաք:

Գարգառ դեպի ափերի երկայնքով լեռնալանջերն այժմ անառոններից զրեթե զրկված են: Ժամանակին լեռնալանջերը ծածկող խիտ անառոններ, կիթեների հետ միասին, տեղական բնակչության համար ողորմական վաճառքի դեպքում լավագույն թաքստոցներ են եղել: Անտառները միաժամանակ լրացնում էին արոտավայրերի ու խոտհարքների պակասը, բնակչությանն ամռանն ու ձմռանը անասուններն արածեցնելիս օգտվել է դրանցից: Չնայած արդեն իսկ միջոցառումներին, բնակչությանը դժվարությամբ է հարմարվում անասուններն ամռանը անտառ քշելու և անառոն խոտով, կանաչ տերեւներով ու մաղաղ շյուղերով կերակրելու հին տնտեսական սովորությունից, սակայն իսկ հսկայական վնաս հասցնելով մատուցած ծառերին ու հողի սակից նոր ելնող շիվերին: Անտառին մոտ լինելն անցյալում, ասես, թուլացնում էր անասունների բարձրելունային արոտավայրեր քշելու անհրաժեշտությունը: Ձմռանը, չոր խոտի պաշարների սահմանափակության հետևանքով, բնակիչները ջանում էին անասունները քշել անառո, որտեղ ավարածր կարա՞նք էր ծառերի մաղաղ ճյուղերը և մի մասը ապրիս սոված անասուններին, իսկ մյուս մասը շալակած կամ դրաստներին բարձած հասցնում դյուղ (այժմ ձմռանն անասունների կերը լրիվ ապահովելու միջոցներ են ձեռք առնված): Ղարաբաղի սարահարթի բարձրալիակա՞ն արոտավայրերից (Ղարաբաղի լեռնաշղթայից այն կողմ) Լեռնային Ղարաբաղի բնակչությանը համեմատաբար ավելի քիչ էր օգտվում, քան Մերձկասպյան ափաստանների կամ Զանգեզուրի ցածրավայրերի բնակիչները:

Երկրի անառոային ընդլայնմանը, լեռնային ընդլայնման հետ միասին, ոչ միայն օգնում էր ափաստ-

վայրերում, չոր պաշարների մեծացման հարցն այժմ ու ավելի սուր է դրվում: Հազարավոր են մասնակցեցի խորը ենթահողային շերտերից ջրերի արհեստական դուրսբերմանը՝ բյազիկների կառուցմանը նվիրված խորհրդակցությունը:

տանի դեմ մղած պայքարին, այլև խոր կնիք էր դրել բնակչության ամբողջ տնտեսական դործունեության ու կենցաղային յուրահատկությունների, բնակավայրերի ու բնակարանների, ապրելակերպի, հավատալիքների ու արվեստի ձևերի վրա:

Բայց անտառային տնտեսությունն արագ անկում էր ապրում: Փայտե առարկաներ՝ տաշտեր, գդալներ, կժեր, թիեր և այլն շինելու արհեստը հեղափոխությունից տու՞յ արդեն դադարել էր համաժողովրդական զործ լինելուց և մեկուսացել առանձին դուղերում (Տումի, Շիթումի, Մուխրենի): Երկրի տնտեսության մեջ մինչ այդ ամենևին էլ ոչ երկրորդական դեր խաղացած անասնապահությունը (բարձրագույն վայրերում) և հացամշակությունը ու այգեգործությունը (ցածրագույն դոտում) դարձան դերակշռող ձևեր: Հավանաբար, այդեզործությունն ավելի վաղ դարձավ այդ մարդին բնորոշ և տարրերից նրան հարեան մարդերից, հանդիսանալով նրա «Ղարաբաղ» (Սև ալդի)՝ անվանվելու պատճառը: Այս անվանն իր նախակերպն ունի հայկական «Աև ալդի» ձևով հանդիպում ենք XII դ. պաամիչ Սամվել Անեցու մոտ, իսկ թուրքական «Ղարա-բաղ» ձևն առաջին անգամ դրաված է 1388 թ.³:

Այդիների համար հարմար են մարզի համեմատաբար ցածրագույն շրջանները, ավելի բարձրում չեն հասունանում ո՛չ խաղողը, ո՛չ թուփը: Ռուսական և արաբասահմանյան շուկաներում հում մետաքսի պահանջարկի մեծացման հետևանքով, թի տնկարաններն սկսեցին ավելի ու ավելի դուրս մղել մրդաատներին, և, չնայած քաղաքացիական պաաներադմի ժամանակ կառավարված հառամներին, դրանց տարածությունը (1500 հա) 1924 թ. քիչ էր գիշում մրդատուների տարածությանը (1800 հա): Դիդակում, Վարանդայում և հաշենում թի անկարանները մասնատված են բաղմաթիվ ցածրագույն բնակավայրերով, դյուղի ցանկապարսպին առնթիվ՝ դեպի կամ ոռոգիչ առվի մոտ, կանոնավոր շախմատաձև կազմով: Տեղական դիներ և օղին հաղիվ էր բավարարում տեղի պահանջը: Այդ մթերները չնչին քանակությամբ էին հասնում Բաքվի շուկա, բայց Շուշու թի սպիրտն ու մետաքսն ար-

³ Թավմա Մեծփեցի, Պատմութիւն Լանկ Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 20: «Սամուելի քահանայի Անեցույ Հաւաքմունք ի գրաց պատմագրաց, յաղագս Գիտի ժամանակաց մինչև ի ներկայիս ծայրաքաղ արաբեալ», Վաղարշապատ, 1893, էջ 193:

Ակադեմիկոս Գր. Ղափանցյանն իր «Хайаса-колыбель армян» աշխատության մեջ Ղարա-բաղ տերմինը կապում է դեպի արգել Զանգեզուր և Արբերջան ձոր բալիների շարժման, Balak-Karan ցեղի, այլ ոչ թե թուրքական զարա-ռն, բաղ-այգի բառերի հետ (ժանոթ. խմբ.):

տաժման հիմնական առարկաներն էին. որոնցով մինչև հեղափոխությունն ապահովվել է շատ դուր-դերի բարեկենցուկությունը: Ընդհուպ մինչև օգոստոսի վերջը Ղարաբաղի նախալեռնային դուղերում օ-վերջը կանգնած էր լինում թորվող թթի օղու հոտը: Օղին կենցաղում բացառիկ տեղ էր դրավում՝ դրա-նով էր գյուղացին սկսում իր աշխատանքային օրն ու դրանով առաջին հերթին պատվում տուն խոտ հյուրին:

Բայց և այնպես առավել բարձրագույն շրջան-ներում ոչ թե թթի տնկարանները, այլ առավելա-պես հացահատիկների արտերն էին ձգտում ան-տառից հող խլել:

Մինչև խորհրդային կարգերի հաստատումը անտառները ենթարկվում էին դաժան ոչնչացման և, ի հաշիվ դրանց, արագ թափով մեծացվում էին հերկվող տարածությունները, սակայն մերկա-ցած հողն անձրևահոսքերով և ձյան հալոցքա-օրերով: մի քանի տարում արագ տեղատար-վում էր: Արդյունքը եղավ այն, որ ամրողջ դա-վառներ, օրինակ՝ Հաղրութի դավառը, դրկվեցին փափուկ հողածածկույթից: Այդ պաածառով բը-նակչությունն ստիպված էր լինում վերակառուցել իր տնտեսական կյանքը, փոխել սովորույթ-ներն ու յուրացնել նոր հմտություններ:

Իսաառնումը շրջանների: Լեռնային Ղարաբա-ղը ամենախայտադղետ ձևեր ունեցող շատ թե քիչ լայնահուն և բացաղատ լեռնադղճերին ու հովիտ-ներին հաջորդող անձուկ ու անդնդախոր կիրճերի մեկուսի երկրամաս է: Շրջանների բաժանելիս այստեղ նշանակություն են ունեցել ոչ այնքան դետերի կիրճերը, որքան լեռնաշղթաները, որոն-ցում սովորաբար չկան անցուղիներ: Համբերա-տար ու դիմացկուն ավանակը կամ ջորին, ինչպես նաև դարտրաղյան ցեղի հաստատաքայլ ձին մար-դուն կամ ծանր բեռը բարձրացնում էին դառի-թափ ճանապարհներով, որոնք երբեմն անցնում էին լեռների ուղղարբձ լանջերով կամ իջնում դրանց կատարներից ստորոտը՝ դեպի խոր կիր-ճում աղմկող վտակի հասակը:

Գետերի առանձին ավազաններ և հովիտներ ապրում էին դրեթե մեկուսի կյանքով, հնա-րավորություն տալով անմիջականորեն կենտրոնա-կան շահական իշխանությանը ենթարկվող առան-ձին ավատատիրական իշխանությունների՝ մելի-րություններին, առանձնանալու:

Պաամական Դիդակն ընդգրկում է Արաքսու-լի, Հաղրութի և Կուրու-Չայ գետի հովիտները: Աս Փոքր Քիրսից ձգվող լեռնաճյուղով բաժանվում էր հարևան Վարանդայից և այստեղ իջխում էր Տոդի դղյակում նստած (XVIII դ. կեսին մի մասը մահ-մեղականություն ընդունած) Ավանյանների կամ Եղանյանների մելիքական առևեր: Ավետարանոց

(Չանախի) դուղում նստավայր ունեցող Շահ-նաղարյան մելիքները տիրույթ Վարանդան ընդ-գրկում էր մնացած Կենդալան, Կըզլ-Չայ և Խոնա-շեն գետերի հարավային հովիտներն ու մինչև Վարադաքնի լեռնաճյուղն ընկած մանր հովիտնե-րը: Ժամանակ առ ժամանակ դրա սահմանները տարածվում էին Չախմախի լեռնաճյուղի հյուսի-սային կողմը, իջնելով դեպի Գարդառ գետը, որից դեպի հյուսիս՝ մինչև Արծաթահանքի լեռնաշղթ-թան, Գարդառ ու Խաչեն գետերի ձախակողմյան վտակները ավազաններում տարածվում էր Խա-չենի դավառը:

Խաչենի պատկանում էր ամենահին մելիքա-կան տոհմերից մեկին՝ Հասան-Ջալալյաններին առնել, որոնց դղյակի ավերակներն առկա են Դարպասներ (Դրասնի) վայրում, Վանք դուղից ոչ հեռու, Գանձասարի վանքից ներքև: Ավելի հյու-սիս՝ Արծաթահանքի լեռնաճյուղից այն կողմ, Թարթառի հովտում, իրենց տիրույթները մինչև Մուսլի լեռնաշղթան էին ուղղում ամրողջացնել Զրարերդի Իսրայելյան մելիքները, որոնց նստա-վայրը Զրարերդի անառիկ ամրոցի հովանու տակ դտնվող Մայրաքաղաք դղյակն էր կտմ «Ինր-մաս» մենաստանի մոտի դղյակը:

XVIII դարի կեսերին դաշտային Ղարաբա-ղից՝ Զիվանշիրից դաղթած Փանահ խանը¹, օգտը-վելով մելիքների միջոցառման զօրությունե-րից, Վարտնդայի մելիք Շահնալարի օգնությամբ հաջողացրեց անցնել մելիքների թիկունքը և ուղին դ նստել ամրացված Շուշիում՝ Գարդառ գետի վե-րին հոսանքում բարձրացող սարահարթում: Նա հարկադրեց Ղարաբաղի տիրողներին ընդունել իր իշխանությունն ու հրաժարվել Իրանական կենտ-րոնական կառավարությանն անմիջական ենթա-կումից: Իր խանության սահմանները Փանահ խանը ընդարձակեց Ղարաբաղի լեռնաշղթայից այն կողմ, ընդհուպ մինչև Արաքս, իրեն ենթա-կելով Զոնգեդուրի և Մեղրու շրջանները: Շահի կառավարության նկատմամբ նա իրեն պահում էր ըավականաչափ ինքնուրույն և անկախ: Սակայն նրա որդի Իրահիմ խանը, Վրաստանի Ռուսաս-տանի հետ միավորվելուց հետո, 1805 թ., հարկա-դրված էր ներկայանալ Վրաստանի կառավարիչ իշխան Յիցիանովի ընդհանրապես, որը ղորքերով հանդերձ դտնվում էր խանության սահմանի մոտ, Քյուրուկ-չայ գետի ափին, և խնդրել՝ Ղարաբաղի խանությունն ընդունելու Ռուսաստանի հովանա-

¹ Զիվանշիրի ավազներից մեկը՝ Նահապարր, որը թշնամի էր Արցախի մելիքներ Աղամին և Հովսեփին, դա-շինքի մեջ մտավ Փանահ խանի հետ և նրան իրավունք տը-վեց իր տիրույթներում կառուցելու Շուշու ամուր բերդը (ձա-նոթ. խմբ.):

վորութեան ներքոյ Այստեղ կնքված պայմանագրի համաձայն, իբրահիմ խանը, հրաժարովելով իրանի վասսալը լինելուց, պարտավորվում էր Ռուսաստանին վճարել ութ հազար ոսկի: Շուշի մտցվեց ռուսական կայազոր, խանին կցվեցին ռուս դիւանդներ ու խորհրդատուներ, խանին թողնվեց միայն ներքին դործերի կառավարումը: Իբրահիմ խանի սպանութիւնից հետո, որը Ռուսաստանի գերագոյն իշխանութիւնն ընդունելուց մեկ տարի անց ձգտում էր խախաել այդ դաշինքը և վերագառնել շահի իշխանութեան տակ, ռուսական կայսեր անունից խանի հետնորդ հայաարարվեց նրա սվապ որդի Մեհտի-Ղուլի խանը, որի օրոք Ռուսաստանի կուսակիցներից սահմանված դավառային դատարանը վավերացրեց խանի կարգադրութիւնների մի մասը, հատկապէս հողային հարցերին վերաբերող կարգադրութիւնները:

Իրանը միայն 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով Ղարաբաղի խանութիւնը պաշտոնապէս հանձնեց Ռուսաստանին, առանձնացնելով, սակայն, Ուշի (կամ Չավնդուր, կամ Ղափան) ու Արաքս գետերի միջև ընկած շրջանը, այսինքն՝ ամբողջ այժմյան Մեղրու շրջանը:

1822 թ. Մեհտի-Ղուլի խանի և նրա մերձավորների Պարսկաստան փախչելուց հետո, Ղարաբաղի խանութիւնը վերակազմվեց «Ղարաբաղի մարզի», որն անմիջականորեն կառավարվում էր ռուսական կառավարչութեան կողմից: Թուրքմենչա-

յի պայմանագրի (1828 թ.) համաձայն, ըստ որի Ռուս-Իրանական սահման ճանաչվեց Արաքս գետը, այդ մարզի կազմի մեջ նոր հողեր մտան (Ողջու և Սրաքսի միջագետքից): «Մարշում» դեռ երկար ժամանակ պահպանվում էր հին բաժանումը մահալների: Հնապայում այն միացվեց Ելիզավետպոլի նահանգին և բաժանվեց դավառների, որոնց սահմանները շատ անդամներ վերաձևվեցին:

Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը կազմվել է Շուշու, Զիվանշիրի, Կարյադինոյի դավառներից և Կուբաթլիի դավառի մի քանի դյուղերից:

Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում, հիմնված պատմական բաժանման վրա, կազմվեց չորս շրջան՝ Դիդակի, Վարանդայի, Խաչենի և Զրարերդի: Սակայն դրանց սահմաններն արդեն լիովին չէին համընկնում պատմական սահմաններին (որոնք, ի միջի այլոց, մեծքների ժամանակ փոփոխվում էին, կախված այս կամ այն իշխանական ասան չորանալուց): Ավելի ուշ, տուր սահմանները որոշ փոփոխութեան ենթարկվեցին շրջանների հին անվանումների պահպանմամբ:

⁸ Ներկայումս ԼՂԻՄ-ը կազմված է հետևյալ վարչարանատարածքային շրջաններից՝ Հաղբութի, Մարտակերտի, Մարտունու, Ասկերանի (մինչև 1978-ը՝ Ստեփանակերտի, որից հետո վերջինս ստացել է քաղաքային միավորի իրավասութիւն) և Շուշու, որպէս հետևանք համապատասխան տեղակայութեան վերանվանման և շրջանների սահմանների ներքին որոշ փոփոխման (ժանոթ. խմբ.):

⁵ «Обозрение российских владений за Кавказом»՝ «այսուհետե՝ ОРВК), т. III, СПб., 1836, էջ 304.